

# Մ Ա Ս II

## ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

### ՄԱՍ II - Ա

#### Տնտեսական ցուցանիշների կանխատեսումներ

##### **Վերջին տարիների սոցիալ-տնտեսական միտումները**

Վերջին տարիները բնորոշվում են Հայաստանի Հանրապետությունում տնտեսության զարգացման եւ բնակչության կենսապահովման մակարդակի բարելավման հստակ միտումներով:

Մասնավորապես, սկսած 1994 թվականից հանրապետությունում արձանագրվել է անընդմեջ տնտեսական աճ՝ 1994-2005 թվականներին կազմելով միջինը՝ տարեկան 8.3 տոկոս: Հատկանշական է, որ 2002-2005 թվականներին տնտեսական աճը կազմել է երկնիշ թիվ: 2006 թվականին նույնպես սպասվում է ՀՆԱ-ի տարեկան իրական աճի բարձր տեմպ՝ մոտ 11 տոկոս:

Նույն ժամանակահատվածում սղաճի ցուցանիշները պահպանվել են վերահսկելի շրջանակներում (2005 թվականին միջին տարեկան սղաճը կազմել է ընդամենը 0.6%) եւ տարեվերջին կազմել նույնիսկ բացասական մեծություն՝ - 0.2%, ինչը կայուն տնտեսական աճի գրավական է:

2005 թվականին եւ 2006 թվականի առաջին յոթ ամիսների ընթացքում առավել ամրապնդվեցին վերջին տարիների դրական զարգացումները տնտեսական ակտիվությունը բնութագրող ցուցանիշների բնագավառում: Մասնավորապես, 2004 թվականի համեմատությամբ 2005 թվականին զբաղվածության մակարդակն աճել է շուրջ 1.3 տոկոսային կետով թեեւ այս հանգամանքը պայմանավորված է հիմնականում երկրի տնտեսապես ակտիվ բնակչության թվի մոտ 1.8, իսկ զբաղվածների թվի գրեթե 0.5 տոկոս նվազմամբ:

Տնտեսական ակտիվության մակարդակի բարձրացումը դրական ազդեցություն ունեցավ նաեւ բնակչության դրամական եկամուտների եւ ծախսերի համամասնության վրա: 2005 թվականին 2004 թվականի համեմատությամբ բնակչության դրամական եկամուտների եւ ծախսերի աճը համապատասխանաբար կազմել է 8.3 տոկոս եւ 5.3 տոկոս, որի արդյունքում եկամուտների գերազանցումը ծախսերի նկատմամբ կազմել է շուրջ 49.8 մլրդ դրամ:

Մակրոտնտեսական զարգացումները դրական են ազդել նաեւ աղքատությունը բնութագրող ցուցանիշների վրա: 2004 թվականի տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքներով աղքատության մակարդակը 2003 թվականի նկատմամբ նվազել է 3.9 տոկոսային կետով եւ կազմել 39.0 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը նվազել է 0.2 տոկոսային կետով՝ կազմելով 7.2 տոկոս: Զբաղվածության ընդլայնումն ու զբաղվածությունից եկամուտների աճը

նպաստել են նաև բնակչության եկամտային խմբերի միջև եկամուտների եւ ծախսերի բաշխվածության հարթեցմանը: Այսպես, 2004 թվականին Ջինիի գործակցի արժեքն ըստ սպառողական ծախսերի, ընթացիկ եկամտի եւ ընդամենը եկամտի համապատասխանաբար կազմել է 0.352, 0.413 եւ 0.387:


Շարունակվում է պետության ֆինանսական կարողությունների ամրապնդման գործընթացը: Սկսած 2001 թվականից արձանագրվել են հարկային եկամուտների անընդմեջ աճ եւ դրան զուգահեռ՝ պետական բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ-ի հարաբերության 3%-ի սահմաններում պահպանման հստակ միտումներ:

## Տնտեսական ցուցանիշների կանխատեսումներ

### Իրական հատված

2001-2005 թվականներին արձանագրվեցին համախառն ներքին արդյունքի բարձր աճի տեմպեր՝ միջինում տարեկան 12.3 տոկոս, որը բավականին բարձր ցուցանիշ է ետխորհրդային երկրների տնտեսությունների համար: Ընդ որում, վերջին տարիներին տնտեսական աճի տեմպերը էլ ավելի արագացան: Այսպես, 2001-2005 թվականների միջին տարեկան աճի տեմպերը գրեթե երկու անգամ գերազանցում են դրանց նախորդած չորս տարիների տնտեսական աճի տեմպերը<sup>1</sup>:

Գծապատկեր 2.1. ԱՊՀ երկրներում եւ Հայաստանում հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 1989-2007 թվականների ընթացքում



Հայաստանում տնտեսական զարգացումները ԱՊՀ ամրամ մյուս երկրների համեմատությամբ առանձնահատուկ են նաև ՀՆԱ-ի ետխորհրդային մակարդակի նկատմամբ վերականգնման աստիճանի տեսանկյունից<sup>2</sup>: 1990–1993 թվականների շարունակական տնտեսական անկման արդյունքում 1993 թվականին ՀՆԱ-ի մակարդակը կազմեց 1989 թվականի մակարդակի

<sup>1</sup> 1997-2000 թվականներին ՀՆԱ-ի միջին տարեկան աճը կազմել է 5.0 տոկոս:

<sup>2</sup> Համեմատության համար հիմք է ընդունվել 1989 թվականը՝ խորհրդային շրջանում Հայաստանում տնտեսական աճի վերջին տարին:

ընդամենը 44.3%-ը (անկումը կազմել էր ավելի քան 55%): Նույն ժամանակահատվածում ԱՊՀ երկրների միջինացված ՀՆԱ ցուցանիշը կազմել էր 1989 թվականի 70.6 %-ը (անկումը կազմել էր 29.4 %): Չնայած այդ հանգամանքին, շնորհիվ հետագա տարիներին արձանագրված անհամեմատ բարձր տնտեսական աճի ցուցանիշների, Հայաստանում 2005 թվականին ՀՆԱ-ի մակարդակը կազմեց 1989 թվականի 114%-ն այն դեպքում, երբ ԱՊՀ մյուս երկրներում այդ ցուցանիշը կազմել էր ընդամենը 86.5%: 2006 թվականին ՀՆԱ-ի մակարդակը ըստ հաշվարկների կգերազանցի 1989 թվականի մակարդակը արդեն 26.5 տոկոսային կետով:

Տնտեսության զարգացման բարձր աճի տեմպերը շարունակվեցին նաև 2006 թվականին՝ հունվար-հուլիս ամիսներին արձանագրվել է 11.6% տնտեսական աճ: Նշված ժամանակահատվածում տնտեսական աճի ապահովման գործում մեծ դեր են ունեցել շինարարության եւ ծառայությունների ոլորտները, որոնց հաշվին ապահովվել է տնտեսական աճի համապատասխանաբար 6.2 եւ 5.2 տոկոսային կետեր: Արդյունաբերության եւ գյուղատնտեսության ճյուղերը 2006 թվականի հունվար-հուլիս ամիսներին չեն նպաստել տնտեսության աճին՝ այդ ցուցանիշը նվազեցնելով համապատասխանաբար 0.3 եւ 1.0 տոկոսային կետերի չափով: Հաշվի առնելով 2006 թվականի առաջին յոթ ամիսների միտումները՝ 2006 թվականի համար ՀՆԱ-ի աճը կանխատեսվում է 11.0%-ի, իսկ ՀՆԱ-ի դեֆլյատորը՝ 3.5%-ի սահմաններում:

Վերջին տարիների դրական փոփոխությունների արդյունքում ՀՆԱ-ի կազմում տեղի ունեցան էական կառուցվածքային տեղաշարժեր: Տնտեսական աճի մեջ մեծ ներդրում ունեցան շինարարության, գյուղատնտեսության եւ արդյունաբերության ճյուղերը: Արդյունքում, շինարարության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2002 թվականի 12.6%-ից հասել է 21.7 տոկոսի 2005 թվականին, արդյունաբերության տեսակարար կշիռը մնացել է գրեթե անփոփոխ՝ 18.9 տոկոսից դառնալով 18.8, իսկ գյուղատնտեսության տեսակարար կշիռը 2002 թվականի 23.4 տոկոսից նվազել է եւ 2005 թվականին կազմել ՀՆԱ-ի 18.7%-ը:

2006 թվականի հունվար-հուլիսին բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը նախորդ տարվա հունվար-հուլիսի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 23.7%-ով: Ըստ 2006 թվականի հունվար-հուլիսի տվյալների, բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել տրանսպորտի եւ կապի ծառայությունները՝ համապատասխանաբար 23.4 եւ 26.8 տոկոս:

Վերջին տարիներին գյուղատնտեսությունում արձանագրվում է կայուն աճ, սակայն 2006 թվականի հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ արձանագրվել է որոշակի անկում՝ 1 տոկոսի չափով: Վերջին հանգամանքը պայմանավորված է ոչ բարենպաստ բնակլիմայական պայմանների արդյունքում բուսաբուծության համախառն արտադրանքի նվազմամբ, իսկ անասնաբուծության համախառն արտադրանքը 2006 թվականի հունվար-հուլիս ամիսներին աճել է 4.2 տոկոսով:


Շինարարության ճյուղի աճը վերջին երեք տարիներին կազմել է միջինում ավելի քան 32%: Շինարարության ֆինանսավորման հիմնական աղբյուրներ են հաղիսացել բնակչության եւ կազմակերպությունների, պետական բյուջեի միջոցները: 2006 թվականի առաջին յոթ ամիսների

ընթացքում իրականացված շինարարության ծավալները աճել են 42.8%-ով: Բնակչության եւ կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները կազմել են ընդամենը իրականացված կապիտալ շինարարության համապատասխանաբար 60.4 եւ 32.8%-ը: Շինարարության հիմնական ուղղությունները ընդգրկել են անշարժ գույքի հետ կապված գործառնությունների, տրանսպորտի եւ կապի, առետրի, մեքենաների, կենցաղային արտադրատեսակների եւ անձնական օգտագործման իրերի նորոգման ոլորտները:

2006 թվականի հունվար-հուլիս ամիսներին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի ծավալների մոտ 1% նվազում՝ 2005 թվականի նույն ժամանակաշրջանում արձանագրված 5.8 տոկոս աճի դիմաց: Նվազումը հիմնականում պայմանավորված է էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի, գոլորշու արտադրության եւ բաշխման ծավալների անկմամբ: Աճ է արձանագրվել հանքարդյունաբերությունում, մասնավորապես՝ մետաղե հանքաքարերի արդյունահանման եւ հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերում, համապատասխանաբար՝ 0.9 եւ 25.3 տոկոսի չափով: Աճ են ապրել նաեւ սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, ինչպես նաեւ մետաղագործական արդյունաբերությունը:

2002 թվականից սկսած ՀՆԱ-ի կառուցվածքում վերջնական սպառման ծախսերն ունեն նվազման միտում: 2005 թվականին դրանք կազմել են ՀՆԱ-ի 86.8%-ը՝ 2001 թվականի 104.8%-ի դիմաց: Վերջնական սպառման ծախսերի նվազմանը գուցա հետ 2005 թվականին աճել են խնայողությունները եւ ներդրումները ՀՆԱ-ում: 2005 թվականին ներդրումները ՀՆԱ-ում կազմեցին մոտ 29.7%:

Գծապատկեր 2.2. ԱՊՀ երկրներում եւ Հայաստանում հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 1989-2007 թվականների ընթացքում



**Հարկարքուցետային հատված**

Հայաստանի Հանրապետության 2005 թվականի պետական բյուջեի եկամուտները կազմել են 374.7 մլրդ դրամ, ընդ որում, 363.1 մլրդ դրամ կազմել են բյուջեի սեփական եկամուտները, եւ 11.6 մլրդ դրամ արտաքին աղբյուրներից ստացված պաշտոնական տրանսֆերտները:

2005 թվականը առանձնահատուկ էր նրանով, որ հարկային եկամուտների աճը ՀՆԱ-ի կառուցվածքում ունեցել է առաջանցիկ տեմպ՝ 14.0-ից հասնելով 14.3 տոկոսի:

2006 թվականի համար հարկային եկամուտների և պետական տուրքերի ճշգրտված ծրագրային ցուցանիշը կազմել է 378.1 մլրդ.դրամ կամ ՀՆԱ-ի 14.7%-ը, իսկ 2007 թվականի կանխատեսվողը՝ 458.9 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 15.7%-ը:

2007 թվականի բյուջետային քաղաքականությունը միտված կլինի հարկային վարչարարության եւ կարգապահության բարելավմանը, իսկ կշարունակվի սոցիալական ոլորտ ուղղվող միջոցների ավելացումը: Վերջին տարիների հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ձեռքբերումներից է բյուջետավորման՝ հատկացվող ռեսուրսների օգտագործման մակարդակով ծրագրերի գնահատումից, ծրագրերի իրականացումից սպասվող արդյունքների գնահատման համակարգին անցնելու նպատակով ծրագրային բյուջետավորման տարրերի ներդրումը:

### **Դրամավարկային հատված**

2006 թվականին պաշտոնապես հայտարարվեց, որ ՀՀ կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականության փողի ազդեցատների նպատակադրման ռազմավարությունից անցում է կատարում գնաճի նպատակադրման ռազմավարությանը: Սակայն տոկոսադրույքների փոխանցման լծակի թույլ գործելը պատճառ հանդիսացավ, որպեսզի գնաճի նպատակադրման ռազմավարությունը կիրառվի փողի ազդեցատների նպատակադրման ռազմավարության որոշ սկզբունքների պահպանմամբ:

2006 թվականին ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսված է ապահովել գնաճի՝ միջին տարեկան 2.1% եւ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ մինչեւ 3% մակարդակներ՝ փողի զանգվածի միջին տարեկան 23.7% եւ փողի բազայի միջին տարեկան 28.3% աճի պայմաններում:

2006 թվականի առաջին կիսամյակի փաստացի արդյունքներով փողի զանգվածը ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ նախորդ տարվա հունիսի նկատմամբ աճել է 22.6 %-ով, իսկ դրամային զանգվածը՝ 39.7%-ով:

2006 թվականի առաջին կիսամյակում տարեվերջի նկատմամբ շրջանառության մեջ գտնվող կանխիկը գրեթե չի փոփոխվել, իսկ դրամային ավանդներն աճել են ընդամենը 6.3 տոկոսով, այն դեպքում, երբ նախորդ տարվա համադրելի ցուցանիշներն աճել են 6.8 եւ 25.5 տոկոսներով:

Պահպանվել են բանկերի կողմից տնտեսության ֆինանսավորման աճի միտումները: 2006 թվականի առաջին կիսամյակում տնտեսության վարկավորումն աճել է 14.4 տոկոսով: Ընդ որում, նկատվել է դրամային վարկերի աճի տեմպի արագացում (21.1%՝ նախորդ տարվա 19%-ի դիմաց) եւ գուգահեռաբար արտարժույթային վարկերի աճի տեմպի դանդաղում (10.34%՝ նախորդ տարվա 12%-ի դիմաց) այստեղից էլ տնտեսության վարկավորման աճի մեջ այս տարի եւս պահպանվել է դրամային վարկերի աճի մեծ տեսակարար կշիռ, որը հիմնականում պայմանավորվել է սպառողական եւ հիպոթեկային վարկավորման աճի բարձր տեմպերով:

Բանկային համակարգում 2006 թվականի առաջին կիսամյակում էապես նվազել է ավելցուկային իրացվելիությունը, ինչն ուղղվել է հիմնականում տնտեսության վարկավորմանը:

ԿԲ-ն նույն ժամանակահատվածում կիրառել է հիմնականում ներքաշող դրամավարկային գործիքներ, մասնավորապես՝ հակադարձ ռեպո գործարքներ եւ ԿԲ արժեթղթերի թողարկում:

Վերջին երեք տարիների ընթացքում արձանագրված բարձր տնտեսական աճը, բնակչության եկամուտների շարունակական ավելացումը, ինչպես նաեւ ոչ բարենպաստ բնակլիմայական պայմանների հետեւանքով արձանագրված գյուղատնտեսական ապրանքների գների բարձրացումը եւ համաշխարհային շուկայում էներգակիրների գների անկանխատեսելի վարքագիծը իրական ռիսկեր են պարունակում 2006 թվականին մինչեւ 3 տոկոս գնաճի նպատակային ցուցանիշն ապահովելու տեսանկյունից, ուստի, հաշվի առնելով կոշտ դրամավարկային քաղաքականության կիրառման աննպատակահարմարությունը, որը կարող է խաթարել երկրում ֆինանսական կայունությունը, իրատեսական է համարվում 2006 թվականի դեկտեմբերին 2005 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ ակնկալել 5.0+/-1.5 տոկոս գնաճ:

### **Սպառողական գներ**

2006 թվականի վեց ամիսների ընթացքում սղաճի ցուցանիշը գերազանցել է սպասված մակարդակը՝ կազմելով 104.3 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ գրանցելով 2.9 տոկոսային կետի աճ:

Գների աճը տեղի է ունեցել ինչպես պարենային, այնպես էլ ոչ պարենային ապրանքների հաշվին: Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք եւ ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 106.7 %, ոչ պարենային ապրանքներինը՝ 102.3 %, ծառայությունների սակագներինը՝ 101.3%:

### **Արտաքին հատված**

Վերջին տարիներին բնորոշ է ընթացիկ հաշվի հիմնական գործոնի՝ ապրանքների արտաքին առևտրի բացասական մնացորդի կրճատման դրական միտումը, որը մի կողմից պայմանավորված էր ներմուծման փոխարինմամբ, մյուս կողմից՝ արտահանման ընդլայնմամբ: Արտահանման աճի տեմպերի արագացումը նկատվել է դեռ 2000 թվականից: 2000-2005 թվականներին արտահանման միջին տարեկան ծավալը 1999 թվականի համեմատ աճել է ավելի քան երկու անգամ եւ կազմել 603 մլն ԱՄՆ դոլար՝ հիմնականում պայմանավորված թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարերի, մետաղների եւ դրանցից պատրաստված իրերի արտահանման աճով: 2000-2005 թվականներին ներմուծման միջին տարեկան մակարդակը կազմել է 1058 մլն ԱՄՆ դոլար՝ 1999 թվականի համեմատ աճելով շուրջ 47%-ով: Արտաքին առևտրի բնականոն զարգացման եւ արտահանման խթանման քաղաքականության դրական արդյունքների մասին է վկայում ներմուծման ծածկման գործակցի բարձր մակարդակը: Ապրանքների ներմուծման ծածկումը արտահանումով 2005 թվականին կազմել է շուրջ 63%: Տնտեսության բացվածության աստիճանը կամ ապրանքների եւ ծառայությունների ապրանքաշրջանառություն/ՀՆԱ հարաբերակցությունը 2005 թվականին կազմել է մոտ 68% նախորդ երեք տարիների միջինում 76%-ի դիմաց:

1999 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը կազմեց 400.7 մլն ԱՄՆ դոլար, իսկ ՀՆԱ-ում՝ 21.7%: 2000-2005 թվականներին ընթացիկ հաշվի պակասուրդը էապես կրճատվեց՝ 2005 թվականին հասնելով մոտ 261 մլն ԱՄՆ դոլարի: ՀՆԱ-ում ընթացիկ հաշվի պակասուրդը 2005 թվականին հասավ 5.3 %-ի:

Վերջին տարիներին հատկանշական ձեռքբերումներից է նաև պետական բյուջեի դեֆիցիտի մակարդակի իջեցմանը զուգահեռ պետական պարտքի մակարդակի կրճատումը: Նախորդ երեք տարիների միջինում 38%-ի դիմաց արտաքին պետական պարտքը 2005 թվականին կազմել է ՀՆԱ-ի 22.3%-ը: Պաշտոնական պահուստային ակտիվների մակարդակը 2005 թվականին ավելացել է 123.8 մլն ԱՄՆ դոլարով, ապահովելով ներմուծման 4.1 ամսյա ծածկույթ:

2006 թվականին ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության աճի միտումը շարունակվում է՝ ընթացիկ տարվա յոթ ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ այն ավելացել է 12.3%-ով և կազմել 1654.6 մլն ԱՄՆ դոլար: Ապրանքների արտահանումը 2006 թվականի հունվար-հուլիսին կազմել է մոտ 522.5 մլն ԱՄՆ դոլար: Նախորդ տարվա յոթ ամիսների նկատմամբ արձանագրվել է ապրանքների արտահանման 2.2 տոկոս նվազում, որը տեղի է ունեցել ինչպես դրամի արժեվորման, այնպես էլ ադամանդագործության անկման պայմաններում: Արտահանման ապրանքային կառուցվածքից բացառելով «թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ եւ դրանցից իրեր» ապրանքախմբի մասնակցությունը, արտահանման աճը 2006 թվականի յոթ ամիսներին կկազմեր 4.3%: Դրամի արժեվորումը եւ բնակչության դրամական եկամուտների աճը նպաստել են ներմուծման աճին, որը յոթ ամիսների տվյալներով կազմել է 1132.1 մլն ԱՄՆ դոլար եւ աճել 20.5%-ով, ընդ որում առանց «թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ եւ դրանցից իրեր» ապրանքախմբի, ներմուծումը ավելացել է 24.8%-ով:

Տնտեսություն իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալը<sup>3</sup> 2006 թվականի առաջին վեց ամիսներին կազմել է 178.5 մլն ԱՄՆ դոլար եւ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 27.9%-ով: Հունվար-հունիս ամիսներին իրականացված շուրջ 86 մլն ԱՄՆ դոլարի օտարերկրյա ուղղակի ներդրումների 33.1%-ը ուղղվել է կապի, 14.3%-ը՝ հանքարդյունաբերության ճյուղերին (բացառությամբ մետաղե հանքաքարի արդյունահանման ենթաճյուղը), 9.2%-ը՝ սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությանը եւ 9.4%-ը՝ օդային տրանսպորտի գործունեության ոլորտին:

2006 թվականի յոթ ամիսների արտաքին ապրանքաշրջանառության 28.3%-ը բաժին է ընկել ԱՊՀ, իսկ 35.8%-ը՝ Եվրամիության 25 երկրներին: ՀՀ խոշոր առևտրային գործընկերներն են՝ Գերմանիան, Բելգիան, Իսրայելը, ԱՄՆ-ը, Նիդեռլանդները եւ Իրանը, իսկ ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը, Ուկրաինան, Թուրքմենստանը եւ Վրաստանը որոնց բաժին է ընկնում ԱՊՀ երկրների հետ ապրանքաշրջանառության շուրջ 96%-ը:

### **Մակրոտնտեսական կանխատեսումներ**

2006 թվականին կանխատեսվում է ՀՆԱ-ի 11.0% իրական աճ եւ դեֆլյատորի 3.5% մակարդակ, ինչն էլ դրվել է բյուջետային ցուցանիշների հաշվարկման հիմքում: Մեծ է նաև հավանա-

---

*3 Առանց պետական կառավարման և բանկային համակարգով ստացված վարկերի:*

կանությունը, որ փաստացի աճը կգերազանցի նշված կանխատեսումը, քանի որ տնտեսության մեջ ավելի բարձր տնտեսական աճի ապահովման համար ստեղծված են բավարար նախադրյալներ:

Աճի տեմպերի վերաբերյալ կանխատեսումները պայմանավորված են ինչպես արտաքին խնայողությունների հոսքերի որոշակի ավելացման, այնպես էլ ներքին խնայողությունների աճի կանխատեսումներով: Եկամտի ընդհանուր մակարդակի աճը եւ բաշխման բեռնայնության որոշակի մեղմացումը կհանգեցեն տնտեսությունում ներքին պահանջարկի աճին, հետեւաբար նաեւ՝ եկամուտների ավելացմանը:

Ինչ վերաբերում է արտաքին պահանջարկին, ապա վերջին տարիների նկատված միտումները կշարունակվեն նաեւ հաջորդ տարիներին: Մասնավորապես, տեղական արտադրության նկատմամբ արտաքին պահանջարկի աճի պայմաններում ապրանքների եւ ծառայությունների արտահանման աճը 2006 թվականին կանխատեսվում է մոտ 8.7%-ի<sup>4</sup>, իսկ 2007 թվականին՝ 13.4%-ի չափով:

Միջնաժամկետ հատվածում ներմուծման ծավալների աճը կպայմանավորվի, ինչպես համախառն տնօրինվող եկամուտների աճով, այնպես էլ՝ տեղական արտադրությունը կազմակերպելու համար հումքի ներկրման եւ օտարերկրյա ուղղակի ներդրումներով ֆինանսավորվող տեխնոլոգիաների ներմուծման անհրաժեշտությամբ: Մյուս կողմից, կնվազեն ներմուծվող ապրանքները տեղական արտադրության ապրանքներով փոխարինելու՝ նախորդ տարիներին նկատված տեմպերը՝ պայմանավորված ներմուծվող ապրանքների փոխարինման հնարավորությունների սահմանափակությամբ: Արդյունքում՝ 2006 թվականին ապրանքների ներմուծման տարեկան աճը կկազմի շուրջ 19%, իսկ ապրանքների եւ ծառայությունների համար՝ շուրջ 16.7%, իսկ 2007 թվականին՝ համապատասխանաբար 13.5% եւ 12.0%: Ապրանքների արտահանումն ավելի արագ է աճելու, քան ծառայություններինը. 2007 թվականին ակնկալվում է ապրանքների արտահանման տարեկան 16% աճ: Արտաքին ներդրումների ներհոսքի, ինչպես նաեւ ներմուծման փոխարինման եւ արտահանման աճի միտումների շարունակման պայմաններում ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները)/ՀՆԱ հարաբերությունը 2007 թվականին կկազմի շուրջ 4.8%:

Հարկաբյուջետային քաղաքականության գերակայությունները, որոնք ամրագրված են նաեւ 2003 թվականի օգոստոսի 8-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով, նախանշել են նշված քաղաքականության իրականացման միջնաժամկետ հիմնական ուղղությունները: Մասնավորապես, հարկային քաղաքականության իրագործման արդյունքում ակնկալվում է՝

- հարկային եկամուտների առաջանցիկ աճ ՀՆԱ-ի աճի նկատմամբ՝ գլխավորապես ստվերային տնտեսության կրճատման հաշվին,
- հարկային վարչարարության կատարելագործում, հարկային ու մաքսային մարմինների եւ տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունների որակական բարելավում,
- հարկային համակարգի շարունակական պարզեցում:

---

<sup>4</sup> Սույն բաժնում համամենաստականները բերված են դոլարային արտահայտությամբ:



Միջնաժամկետ հատվածում պետական բյուջեի ծախսային եւ դեֆիցիտի կառավարման քաղաքականությունները կառուցված են լինելու հիմնականում հետեւյալ հարկաբյուջետային սկզբունքների վրա.

- պետական բյուջեի սոցիալականացման աստիճանի բարձրացում,
- ծախսերի գծով ապառքների կուտակման բացառում,
- դեֆիցիտի կայուն եւ ցածր մակարդակի պահպանում՝ պետական պարտքի բեռը չծանրացնելու նպատակով,
- դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով արտաքին արտոնյալ վարկային ռեսուրսների ներգրավում:

Աղյուսակ 2.1. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ

Ցուցանիշը	2004	2005	2006	2007
	փաստացի		ծրագիր <sup>5</sup>	կանխ.
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	1624.6	2244.0	2400.7	2922.4
ՀՆԱ-ի իրական աճ (%)	14.0	10.1	7.5	9.0
Անվանական ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար)	2807.1	3555.0	5716.1	8185.9
ՀՆԱ-ի դեֆլյատոր (%)	4.6	6.0	3.0	4.0
Մղած (Ժ-շրջ-ի վերջ) (%)	2.0	-0.2	3.0	4.0
Մղած (միջին, %)	7.0	0.6	3.0	4.5
Փոխարժեք (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար, միջին)	533.5	457.7	420.0	357.0
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ (մլրդ դրամ)	302.2	374.7	412.4	489.5
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ/ՀՆԱ (%)	15.8	16.7	17.2	16.8
Պետական բյուջեի հարկային եկամուտներ և տուրքեր (մլրդ դրամ)	267.0	321.5	364.3	458.9
Պետական բյուջեի հարկային եկամուտներ և տուրքեր/ ՀՆԱ (%)	14.0	14.3	15.2	15.7
Պետական բյուջեի ընդամենը ծախսեր (մլրդ դրամ)	334.0	417.5	482.2	557.8
Պետական բյուջեի ընդամենը ծախսեր/ ՀՆԱ (%)	17.5	18.6	20.1	19.1
Պետական բյուջեի դեֆիցիտ (մլրդ դրամ)	31.7	42.7	69.8	68.3
Պետական բյուջեի դեֆիցիտ/ ՀՆԱ (%)	1.7	1.9	2.9	2.3
Ապրանքային հաշվեկշիռ (մլն ԱՄՆ դոլար)	-458.0	-587.9	-618.7	-903.0
Ապրանքների ներմուծում (մլն ԱՄՆ դոլար)	-1196.3	-1592.8	-1654.0	-2151.0
Ներմուծում (ապրանքներ, ծառայություններ) / ՀՆԱ (%)	-42.3	-40.5	-35.4	-31.7
Ապրանքների արտահանում (մլն ԱՄՆ դոլար)	738.3	1004.9	1035.3	1248.0
Արտահանում (ապրանքներ, ծառայություններ) / ՀՆԱ (%)	27.5	27.3	23.5	20.1

<sup>5</sup> ԴՅ 2006 թվականի պետական բյուջեով հաստատված հարկաբյուջետային ցուցանիշներ և դրանց հաշվարկների հիմքում դրված մակրոտնտեսական ցուցանիշներ: